

ԶԵԿՈՒՑՈՒՄ

«Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնքի ղեկավարի 2015թ. առաջին կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ

16.07.2015

Հարգելի համայնքի բնակիչներ և հյուրեր.

Գյուղապետարանը ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով՝ ձեր ուշադրությանն է ցանկանում ներկայացնել հաշվետու տարվա ընթացքում իրականացված աշխատանքներն ըստ առանձին բնագավառների:

Համայնքն ունի 293.7 հա հողատարածք, որից 214.06 հա գյուղատնտեսական նշանակության են: Բնակչության թիվը համայնքում կազմում է 1221 մարդ, տնտեսությունների քանակը՝ 216: Հաշվետու տարում ծնվել են 11 երեխաներ:

Ինչպես ամեն տարի, գյուղապետարանը կազմակերպել է և Ազգային վիճակագրական ծառայության Վաղարշապատի տարածքային բաժին է ներկայացրել աշխատակազմի միջոցով իրականացված ցանքատարածությունների հաշվառումը, յուրաքանչյուր ամսվա ստացած բերքի հաշվառման ցուցանիշները, գարնանացան ցանքատարածությունների բերքատվության ամսական արդյունքները:

1. Սոցիալ-տնտեսական բնագավառ

2015 թվականի առաջին կիսամյակի ընթացքում գյուղապետարանի աշխատակազմի կողմից կատարվել են որոշակի աշխատանքներ՝ ի նպաստ համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման, քանի որ մեզ համար առաջնահերթ լուծման խնդիր է հանդիսանում համայնքի բնակչության սոցիալական վիճակի բարելավումը: Համայնքի բյուջեով հնարավորության սահմաններում կազմակերպվել են համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին ֆինանսական օգնություն ցուցաբերելու աշխատանքներ: Այս կիսամյակի ընթացքում Շահումյանի թ/ֆ համայնքի 19 անապահով ընտանիքների տրվել է դրամական օգնություն:

Դրամական օգնությունը տրվելիս հաշվի են առնվել համայնքի բնակիչների սոցիալական վիճակը, ավագանուն ուղղված նրանց դիմումները, որոնցից բոլորն էլ քննության են առնվել ավագանու անցկացրած նիստերում:

Անհրաժեշտության դեպքում գյուղապետարանը սոցիալապես անապահով պայմաններում ապրող որոշ ընտանիքների աջակցել է պետության կողմից տրվելիք նպաստների ստանալուն:

Համայնքում մեծ ուշադրություն է հատկացվում երիտասարդներին, նրանց համար հետաքրքիր միջոցառումների կազմակերպմանը: Փետրվար ամսին Տեառնընդառաջի տոնի առթիվ կազմակերպվել է միջոցառում, որի ժամանակ համայնքի նորաստեղծ

ընտանիքներին բաժանվել են նվերներ՝ ոսկյա մատանիների տեսքով: Ապրիլ ամսին կազմակերպվել է միջոցառում՝ նվիրված Մայրության և գեղեցկության տոնին: Մայիս ամսին համայնքի բնակչության համար միջոցառում է կազմակերպվել միջոցառում Մայիսի 9-ի կապացությամբ: Ինչպես ամեն տարի, այս տարի ևս « Կերջին զանգի » միջոցառման առթիվ համայնքի բյուջեից հատկացվել է գումար՝ դրամական պարզևատրման տեսքով, որը տրվել է Շահումյանի միջնակարգ դպրոցի ավարտական դասարանին:

2. Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ

2015 թվականի առաջին կիսամյակի ընթացքում համայնքում պարբերաբար իրականացվել են աղբահանության աշխատանքներ. ապրիլ ամսին, ինչպես ամեն տարի, բնակիչների հետ կազմակերպվել է շաբաթօրյակ:

Նաև սիստեմատիկ իրականացվել է փողոցների լուսավորության աշխատանքը:

Մասամբ վերանորոգվել են նաև գյուղամիջյան ճանապարհները: Ճանապարհների փոսերը լցվել են խճաքարերով:

4.Պաշտպանության բնագավառ

Աջակցել ենք նաև էջմիածնի զինվորական կոմիսարիատի գործունեությանը՝ տրամադրելով հնարավոր բոլոր անհրաժեշտ տեղեկությունները և փաստաթղթերը համայնքում գորակոչին ենթակա անձանց վերաբերյալ:

5. Ֆինանսների բնագավառ

Հաշվետու տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով Շահումյանի թ/ֆ համայնքի գյուղապետարանի աշխատակիցների կողմից կազմակերպվել են նաև հողի հարկի, գույքահարկի հավաքագրման և վերահսկման աշխատանքներ: Հողի հարկը կիսամյակային պլանի համաձայն գանձվել է 95.2 %, գույքահարկը՝ շենքերի- շինություններինը՝ 59.1 %, փոխադրամիջոցներինը՝ 142.8 %:

Համայնքի բյուջեի եկամուտներից սեփական եկամուտների կատարողականը կազմում է 119.8 %:

Շահումյանի թ/ֆ համայնքի ղեկավարությունը բնակիչների հետ մշտապես գտնվում է անմիջական շփման մեջ՝ ուշադրություն դարձնելով վերջիններիս բազմաբնույթ խնդիրների լուծման համար դրված ցանկացած առաջարկություն: Բնակիչներից յուրաքանչյուր ոք, դիմելով գյուղապետարան, բոլոր հարցերի համար ստացել է սպառիչ պատասխաններ: Գյուղապետարանը հնարավորությունների սահմանում աջակցել է բնակչությանը այլ հիմնարկ-ծեռնարկությունների հետ ունեցած խնդիրների համահարթեցմանը՝ ցուցաբերելով խորհրդատվական օգնություն, ինչպես նաև ապահովել է նրանց փաստաթղթային շրջանառությունը, լինի դա տեղեկանքների, թե այլ փաստաթղթերի տեսքով: Շուրջ 80

բնակիչներ հաշվետու տարվա ընթացքում ստացել են բազմաբնույթ բուժանդակությամբ տեղեկանքներ:

2015 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Շահումյանի թ/Ֆ գյուղապետարան տարբեր հիմնարկություններից մուտքագրվել են շուրջ 115 պաշտոնական բազմաբնույթ գրություններ, որոնք պատասխանվել են ըստ անհրաժեշտության:

Նաև ի կատարումն համայնքների ավագանիներին 2009 թվականին ուղղված մեթոդական նամակի պահանջների՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն ենք ուղարկել համայնքի բյուջեի փոփոխությունները, համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը, տեղական տուրքերը, համայնքի բյուջեն, համայնքի քառամյա ծրագիրը հաստատող որոշումների փաթեթները:

Ցանկացած նորամուծություն օրենքի բնագավառում, որը վերաբերում է համայնքի բնակիչների առջև դրված հիմնախնդիրների լուծմանը, հողի հարկի և գույքահարկի, տեղական տուրքերի մուծմանը, ինչպես նաև այլ կարևոր հարցերի, բնակիչներին տեղեկացրել են Շահումյանի թ/Ֆ գյուղապետարանի աշխատակիցները:

Հաշվի առնելով այս ամենը՝ համայնքի ղեկավարությունն արածը չի համարում բարձր ցուցանիշ և դրանով չի բավարարվելու: Համայնքի զարգացմանն ուղղված աշխատանքները միշտ ընթացքի մեջ են և շարունակական:

Շահումյանի թ/Ֆ համայնքի ղեկավար՝



Ա. Յայլոյան

ԳՅՈՒՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Համայնքի համար առաջնահերթ լուծման խնդիր է հանդիսանում գազաֆիկացման հարցը: Համայնքի մոտ 30 տնտեսություն գազաֆիկացվել է Շահումյան գյուղի գազի բաժանարար կետից: Որպեսզի Շահումյանի թ/ֆ համայնքը գազաֆիկացվի, առաջին հերթին համայնքին անհրաժեշտ է գազի նոր բաժանարար կետ, որը կապահովի համայնքի մնացած բնակիչների տները գազաֆիկացնելու: Սա շատ տարողունակ և զուեար պահանջող խնդիր է, որի լուծման համար խնդրվում է մարզպետարանի աջակցությունը:
2. Առաջնահերթ հիմնախնդիր է նաև համայնքի կոյուղագծերի վերանորոգման հարցը:
3. Մեզ համար կարևոր խնդիր է հանդիսանում նաև համայնքում մանկապարտեզի բացակայությունը:
4. Հիմնախնդիր է նաև համայնքի կենտրոնական ճանապարհի ասֆալտապատման աշխատանքները:

Շահումյանի թ/ֆ համայնքի ղեկավար՝



Ա. Յայլոյան